

**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԽՈՍՈՒՑԹԻ
ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՇՈՒՐՁ**

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

Կորոնավիրուսային (COVID-19) համավարակին վերաբերող գործընթացների հասարակական և քաղաքական հնչեղությունն աննախադեպ մեծ է: Քաղաքական և հասարակական բոլոր հարթակներում ընթանում են համավարակի վերաբերյալ աշխույժ քննարկումներ: Դրանց մասնակցում են պետությունների ամենաբարձր պաշտոնյաները, ընդդիմադիր գործիչները, հասարակական կազմակերպությունները, ակտիվիստները և այլք: Տեղեկատվական տարբեր միջոցներով իրենց կարծիքներն են հայտնում հումանիտար և բնական ոլորտների գիտնականներ (այս թվում նաև՝ բժիշկներ), կրոնավորներ, մոզեր, գուշակներ, խաբեբաներ, մասնագիտություն չունեցող ահռելի թվով անձինք: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ այս քննարկումներին մասնակցում է ողջ մարդկությունը:

Կորոնավիրուսային համավարակին վերաբերող ներկայիս պաշտոնական խոսույթը պնդում է, որ մարդկությանը սպառնում է (և արդեն սկսել է իրականանալ) համավարակային վիրխարի մի աղետ: Պաշտոնական տվյալներին կից և անհամեմատ ավելի մեծ ծավալով տարածվում են համավարակի ծագմանն ու գոյությանն առնչվող բազմաբնույթ հայեցակետեր, որոնք հակադրվում են պաշտոնական խոսույթին՝ պնդելով, թե վերջինս կեղծ է և/կամ առկա է համամարդկային մի դավադրություն:

Այս դավադրաբանական (կոնսպիրոլոգիական) հայեցակետերը դատարկ տեղում չեն առաջացել: Մարդկության ոչ անցյալը, ոչ էլ ներկան ենեզ միտումների և քմահաճ արյունահեղությունների պակաս չեն ունեցել ու չունեն, ուստի մեծ դավադրություն փնտրողների կանխամիտվածությունը դեպի այդպիսի հայեցակետերը լիովին հասկանալի է: Հասկանալի է նաև այն, որ դավադրություն փնտրողները կարողանում են գտնել և/կամ ստեղծել հոգուտ իրենց տեսությունների խոսող «փաստեր», որովհետև գրեթե ցանկացած տեսության համար կարող ենք հայթայթել «...վերիֆիկացիաներ, եթե մենք փնտրում ենք հաստատումներ»¹: Իսկ այնպիսի դեպքեր ու իրադրություններ, որոնք կարող

¹ **Popper R. K.**, *Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge*, New York, 1962, p. 36.

են մեկնաբանվել որպես մեծ դավադրության առկայությունն ապացուցող փաստեր, կարելի է գտնել բոլոր տեսակի տեղեկատվություններում. պատկան մարմինները խոսում են խուճապի չմատնվելու մասին, սակայն լայն հանրությունը երբեմն ականատես է լինում պաշտոնատար անձանց, բժիշկների, գիտնականների ինչպես խուճապային վարքի, այնպես էլ խիստ անհանգստացնող հայտարարությունների: Բացի սա էլ, իրավաքաղաքական մի շարք խոշոր գործորդներ, պետական կառույցներ ու մասնագետներ համավարակին վերաբերող հարցերում հաճախ հակասում են ինչպես միմյանց, այնպես էլ իրենք իրենց: Ավելին՝ միևնույն պետության առաջին դեմքերից մեկը խոսում է սարսափելի իրադրության մասին, իսկ մեկ ուրիշը՝ հեզմում այդ տագնապը:

Այս ամենը հասարակության մեջ հարուցում են կասկածներ կորոնավիրուսի խոսույթի հավաստիության վերաբերյալ, ու բնավ պատահական չէ, որ մեծ դավադրության մասին ակնարկում և/կամ ուղիղ տեքստով խոսում են նաև շատ ու շատ ողջախոհ մարդիկ:

Համավարակի պաշտոնական խոսույթին հակադրվող տեսությունները երբեմն կրոնական են, երբեմն՝ գաղտնագիտական, երբեմն՝ կենցաղային կամ գիտակցության մեկ այլ ձևի պատկանող, սակայն բոլորն էլ կամ մեկնարկում են գիտությունից (բժշկագիտությունից), կամ էլ պնդում, որ հիմնված են գիտական հետազոտությունների վրա: Եվ որովհետև երբեմն նույնիսկ պաշտոնական խոսույթն է ընդունում վերջնական ճշմարտության ձև, ապա հարկավոր է **այդ խոսույթին տալ իմացաբանական համապատասխան որակում՝ մեկնարկելով գիտական և մասնավորապես բժշկագիտական գիտելիքի հավաստիության հիմնախնդրից:**

Այսպիսով, կարո՞ղ են արդյոք կորոնավիրուսային համավարակին վերաբերող պնդումները լինել ճշմարիտ՝ ստանալով և/կամ լինելով գիտական հիմնավորումներ:

Չարցադրման այսպիսի եղանակը կարող է թվալ սխալ, սակայն մերօրյա ՋԼՄ-ները պարզապես լեցուն են գիտնականների (առավելապես՝ բժիշկների) ու քաղաքական գործիչների այնպիսի ելույթներով, որոնք, հանդես գալով գիտության անունից, անում են անվերապահ հավաստիություն պարունակող պնդումներ:

Այստեղ նախքան խնդրի բուն քննարկմանն անցնելը պետք է տրվեր իմացաբանական բնորոշիչների տեսակները ներկայացնող և դասակարգող մի համակարգ, որով կորոշակիացվեին դրանց փոխհարաբերությունները: Սակայն հարկ է նկատել, որ իմացաբանական բնորոշիչները միևնույն համակարգում տեսակավորելը շատ դժվար կամ գրեթե անհնար է: Դժվարության հիմնական պատճառը թերևս այն է, որ *իմացաբանական բնորոշիչ* սեռային հասկացության մեջ մտնող տեսակները խառնիխուռն փոխհարաբերությունների մեջ են:

Այսպես, իմացաբանական ամենաառանցքային բնորոշիչը, անկասկած, *ճշմարիտն* է: Այն գոյաբանական նշանակություն ունի ոչ միայն

միտքը հաստատող (հավաստի, վավերական, ճշգրիտ), այլև հերքող (սուտ, սխալ, կեղծ) բնորոշիչների համար, որովհետև իմացաբանական բոլոր բնորոշիչները կեցություն են ստանում *ճշմարիտի* գոյությամբ ու վերջինիս փնտրության շրջանակներում²: Իսկ այս հանգամանքը, չլինելով միակ խանգարողը, լիովին բավարար է, որպեսզի խաթարվի իմացաբանական բնորոշիչների դասակարգման ցանկացած փորձ:

Փիլիսոփայական հայալեզու գրականության մեջ *ճշմարիտին* ավանդաբար հակադրվում են *մոլորությունը*, *սխալը*, *կեղծը*: Սակայն հակադրվող այս և այլ բնորոշիչներից ոչ մեկը *ճշմարիտի* օրինաչափորեն հակադեմ հասկացությունը չէ, պարզապես լինելով *ճշմարիտին* հակասող, երբեմն կարող է (համապատասխան համատեքստում) մեկնաբանվել որպես հակադեմ: *Ճշմարիտի* հակադեմ բնորոշիչը լինելու ամենահավանական թեկնածուն ոչ *ճշմարիտն* է, որը հայկական միջավայրում հակադրվում է *ճշմարիտին* կրկին միևնույն ավանդույթի շրջանակներում: Վերջինս *ճշմարիտին* հակադրվող բոլոր բնորոշումներից ամենաընդհանուրն է և մյուսներին անհրաժեշտաբար ներառում է: Սակայն հասկանալի է, որ ոչ *ճշմարիտը*, լինելով ժխտում, որոշակիորեն ոչինչ չի արտահայտում, այլ կիրառելի է միայն լեզվաոճական նկատառումներով: Բացի սա էլ, քանի որ *ճշմարիտը* դրական հասկացություն է, ապա նրա հակադեմ հասկացությունը նույնպես պետք է լինի դրական: Այսինքն՝ չկա այն սեռային դրական հասկացությունը, որն օրինաչափորեն լինի *ճշմարիտի* հակադեմը, այլ կան *ճշմարիտին* հակասող բազմաթիվ բնորոշիչներ, և դրանցից ոչ մեկը համաչափորեն չի հակադրվում *ճշմարիտին*:

Ճշմարիտին հակադրվող բնորոշիչները միևնույն օրինաչափությանը չենթարկվող հարաբերությունների մեջ են նաև միմյանց հետ: Հավանաբար կարելի է պնդել, որ *սխալ* և *կեղծ* հասկացությունները համարժեքության հարաբերության մեջ են, սակայն միևնույն ժամանակ կարող են լինել դեպքեր, երբ դրանք գտնվեն խաչավորման, ստորակցության կամ մեկ այլ հարաբերության մեջ՝ ակնհայտորեն խախտելով հակասության օրենքը: Փաստորեն առկա է մի խճճված իրադրություն, որն անբաժանելիորեն կապված է համաշխարհային ու հայկական փիլիսոփայական ավանդույթներին ու դրանց շրջանակներում կատարվող մեկնաբանություններին³: Ուստի այս խառն ու բարդ իրադրություն-

² Տե՛ս **Գ. Հակոբյան**, Իրավաբաղաբական խոսույթի ոչճշմարիտ տարրերի շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», Եր., 2020, № 1 (31), էջ 32:

³ Այս նկատման համար հիմք են հանդիսացել հայալեզու փիլիսոփայության ներկայիս կրթության շրջանակներում նշանակալի դեր ունեցող ուսումնական հետևյալ ձեռնարկները **Հր. Շաքարյան**, Փիլիսոփայություն, Եր., 2005, **Հ. Ա. Գևորգյան**, **Վ. Խ. Բաղդասարյան**, Տրամաբանություն, Եր., 2015, **Գ. Ա. Բրուտյան**, Տրամաբանություն, Եր., 1998 և այլն: Հատկանշական է, որ նշված աշխատությունները այստեղ քննարկվող հիմնախնդրին առնչվող էական որոշ հարցերում արտահայտում են միմյանց հակասող դիրքորոշումներ:

նը սկզբունքորեն չի կարող հանգուցալուծվել սույն վերլուծության շրջանակներում: Այնուամենայնիվ, չանտեսելու համար *Ճշմարիտի* այնպիսի նշանակալի հակոտնյաների գոյությունը, ինչպիսիք են *կեղծը* և/կամ *սխալը*, կարելի է պայմանականորեն ընդունել, որ *սխալ* բնորոշիչը կիրառելի է մտակառույցների տրամաբանական թերությունները նշելու համար, իսկ *կեղծը*՝ իմացաբանական: Այսինքն՝ երբ մտքերի շաղկապման մեջ առկա է տրամաբանական կանոնների խախտում, ապա այդ մտակառույցների համախումբը նախընտրելի է որակել *սխալ*: Իսկ երբ նկարագրվում է իրականությունը, սակայն ճշգրտորեն չի արտացոլվում այն, ապա տվյալ նկարագրությունը կարելի է որակել *կեղծ*: Հաջորդիվ, այս երկուսը միասին կարելի է տեղակայել *մոլորության* մեջ շեշտադրելով այն հանգամանքը, որ սխալ և/կամ կեղծ մտակառույցներ արտահայտող սուբյեկտը, ի տարբերություն, օրինակ ստախոսի⁴, չունի նենգ միտում, այլ պարզապես մոլորվել է ճանաչողության գործընթացում: Եվ վերջապես, *Ճշմարիտի հակոտնյա* ընդհանուր բնորոշիչը, որը նույնպես շրջանառվում է հայալեզու փիլիսոփայության մեջ, կարելի է փոխնիփոխ օգտագործել *ոչ ճշմարիտի* հետ որպես վերջինիս համարժեք հասկացություն:

Ճշմարիտի հակոտնյա հասկացության ընտրությունը կամայական չէ: Այդ հասկացությունն արտացոլում է *Ճշմարիտի* հակադեմը և, ինչպես *ոչ ճշմարիտը*, ներառում է *Ճշմարիտին* հակասող բոլոր բնորոշիչները: Բայց *Ճշմարիտի հակոտնյան*, ի տարբերություն *ոչ ճշմարիտի*, դրական հասկացություն է և արտացոլում է *Ճշմարիտին* տրամագծորեն հակադրվող բնորոշիչը: Այս հասկացության կիրառությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ (հավանաբար) որևէ լեզվում չկա բառ, որով նշանակվի *Ճշմարիտի* հակադեմը: Այն միշտ հանդես է գալիս իր տեսակներից որևէ մեկի միջոցով, որն անուղղակի և ներակայորեն կարող է (նայած հանգամանքների) պարունակել նաև *ոչ ճշմարիտի* այլ տեսակներ: Ուստի առավել նպատակահարմար է թվում գործ ունենալ *ոչ թե ճշմարիտի հակոտնյայի տեսակների, այլ ճշմարիտի հակոտնյայի կերպավորումների հետ, այն էլ՝ ընտրողաբար ու սահմանափակ*, որովհետև «... ճշմարտության հակոտնյան ունի հարյուր հազարավոր կերպարանք և չունի սահմաններ»⁵: Իսկ այդ կերպավորումները (տեսակների ի հայտ գալը) միշտ կախված են խոսույթին մասնակցող սուբյեկտների (հաղորդող/ընդունող) միտումներից, նրանց գիտակցությունների մակարդակներից, ֆիզիկական համատեքստից և այլ բազմաթիվ գործոններից, որոնք միասին վերցրած կազ-

⁴ Ինչպես իրավացիորեն պնդում է Մոնտենը, միտքը որակվում է *սուտ*, եթե այն արտահայտողը գիտակցաբար ու միտումնավոր խեղաթյուրում է իրականության պատկերը: Ըստ նրա՝ ստախոսներն «... ասում են մի բան, իսկ իրենք իրենց մեջ գիտեն այլ բան», Մ. Մոնտեն, Փորձեր, Եր., 1991, էջ 38:

⁵ Մ. Մոնտեն, նշվ. աշխ., էջ 39:

մում են **խոսույթի մշակութային համատեքստը**⁶:

Ասվածին հավելենք նաև այն, որ ո՛չ *Ճշմարիտը*, ո՛չ էլ վերջինիս հակոտնյաները ճշգրիտ առումով հասկացություններ չեն, որովհետև բնորոշիչները, լինելով ածականներ, ուղղակիորեն հասկացություն արտահայտել չեն կարող: Դրանք հասկացություններ են արտահայտում, երբ օգտագործվում են գոյականաբար⁷: Այսինքն՝ օրինակ, *սուտը*, որը իմացաբանական առումով մտքի բնորոշիչ է, տրամաբանական առումով՝ հատկանիշ, իսկ լեզվաբանական առումով՝ նաև ածական, ինքնուրույնաբար չի կարող արտահայտել հասկացություն: Այն արտահայտում է հասկացություն, երբ իրենով նշանակվում է մտքի այն առարկան, որի հատկանիշն է ինքը: Իսկ սա արդեն մի տեսակ շեղված վերացարկման արդյունք է, երբ մտքի օբյեկտի հատկանիշներից մեկը բացարձակացվում է ոչ միայն դրա մյուս հատկանիշների, այլ հենց այդ օբյեկտի (հասկացության) անտեսման հաշվին: Արդյունքում՝ մտքի օբյեկտը լեզվում արտահայտվում է միայն ներակայորեն, իսկ բացորոշ արտահայտվում է դրա իմացաբանական բնորոշիչը, կամ որ նույնն է՝ տրամաբանական հատկանիշը, կամ որ կրկին նույնն է՝ գոյականաբար կիրառվող ածականը: «Այսինքն՝ առարկան և հատկանիշը փոխատեղվում են, և արտահայտվող հատկանիշը, որն արդեն հանդես է գալիս որպես էություն, ներակայորեն պարունակում է այն առարկան, որի հատկանիշն էր ինքը»⁸: Եվ բնավ պատահական չէ, որ աշխարհի (գրեթե) բոլոր լեզուներում էլ իմացաբանական բնորոշիչները, բացի կցորդված ձևից, օգտագործվում են նաև գոյականաբար՝ իրենցով բնորոշվող օբյեկտին համարժեք, իսկ երբեմն էլ նույնական: Այսպիսի դեպքերում բնորոշիչները լեզվում արտահայտվում են էություն (գոյական) նշանակող բառերով, բայց կրկին ըմբռնվում որպես իրենցով բնորոշվողի (հաճախ՝ էական) հատկանիշ: Եվ, ի միջի այլոց, հենց այս ձևով են մտքում արտացոլվում և լեզվում արտահայտվում ճշմարիտի այնպիսի նշանակալի հակոտնյաներ, ինչպիսիք են նաբատիվը և միֆը: Վերջիններս հաճախ են իրավացիորեն մեկնաբանվում որպես գիտելիքի տեսակներ, բայց չպետք է մոռանալ, որ դրանք խիստ ու ճշգրիտ առումով նախ և առաջ մտակառույցների բնորոշիչներ են: Եվ քանի որ սրանցով բնորոշվող մտակառույցները նշանա-

⁶ *Մշակութային համատեքստ* հասկացությունը այս վերլուծության մեջ արտացոլում է համատեքստային բոլոր տարրերն ու դրանց ամբողջությունը, որոնք արտահայտվող մտքի տեսակային ըմբռնման համար կարող են լինել ազդեցության գործոններ: Հասկացության այսպիսի կիրառությունը, որն արդեն արմատավորվել է նաև հայալեզու փիլիսոփայության մեջ, մեկնարկում է համատեքստի, ֆիզիկական համատեքստի, ենթատեքստի և այլ գործոնների վերաբերյալ ընդունված հայեցակետերից: Տե՛ս, օրինակ, **Հ. Օ. Հովհաննիսյան**, Բանավեճի տեսություն և արվեստ: Փիլիսոփայական քննախոսություն, Եր., 2019, էջ 160-165:

⁷ Տե՛ս **Հ. Ա. Գևորգյան, Վ. Խ. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 20-21:

⁸ **Գ. Հակոբյան**, Ճշմարիտի էության բացատրման և սահմանման խնդրահարույց բնույթը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», Եր., 2020, № 3 (33), էջ 41-42:

կալի են իրենց հենց այդ բնորոշման տեսանկյունից, ապա հենց այդպես էլ արտացոլվում ու անվանվում են: Ավելին՝ կարելի է իրավացիորեն պնդել, որ սրանք այն դեպքերից են, երբ ոչ միայն ներակա էությունն արտացոլվում է իրեն որակող բնորոշչի միջոցով, այլև միաձուլված և նույնացած էությունն ու բնորոշիչը ի հայտ են գալիս միասին: Ի հայտ գալու այս ձևը ինքնըստինքյան նպաստում է նաև մտքերի խնայողությանը և խոսքի սեղմությանը, որովհետև այս ձևում ճանաչողության սուբյեկտը ստիպված չի լինում նկարագրել լեզվամտային այն համակարգը, որում կառուցակցված են գիտելիքի տվյալ տեսակն ու իր բնորոշիչը: «Միֆ» և «նարատիվ» բառերով, կախված համատեքստից, կարող են արտահայտվել և՛ բնորոշումներ (որոնք տրվում են համապատասխան մտակառույցների), և՛ գիտելիքի տեսակներ (որոնց համապատասխանում են այս որակումները): Այսինքն՝ *միֆն* ու *նարատիվը* իրականում մտակառույցի այնպիսի էական բնորոշիչներ են, որ դրանցով որակվող գաղափարները հենց դրանցով էլ արտացոլվում և արտահայտվում են:

Հասկանալի է, որ առարկայացված կիրառման կարող են ենթարկվել ոչ միայն իմացաբանական, այլ նաև ուրիշ բնորոշիչներ: Մտորման ընթացքում ցանկացած հատկանիշ կարող է ստանալ առարկայացված կիրառություն և արտացոլել առարկա, սակայն միշտ ներակայորեն միջնորդավորված այն հասկացությամբ, որի հատկանիշն էր ինքը նախքան առարկայացվելը: Եվ հենց այս գործընթացով է, որ *գեղեցիկ* բնորոշչին համարժեք (փոխնիփոխ) կիրառվում է *գեղեցկությունը*, *արդարին*՝ *արդարությունը*, *ճշմարիտին*՝ *ճշմարտությունը*:

Բնորոշչի այսպիսի փոխակերպումը լեզվաբանության մեջ մեկնաբանվում է որպես լեզվական փոխանունություն, այն է՝ որոշյալի արտահայտումը որոշչի (ածական, թվական, հարակատար և ենթակայական դերբայներ) միջոցով, և խոսքում ունի շատ տարածված ու սովորական գործածություն⁹:

Այսպիսով, կարելի է պնդել, որ *իմացաբանական բնորոշիչ* հասկացությունը տրամաբանական կանոնավոր բաժանման (միևնույն հիմքով, համաչափ, հաջորդական) ենթակա չէ: Բացի սա էլ, ներկայումս կառուցարկված և/կամ բացահայտված չէ *ճշմարիտի* հակադեմ բնորոշումը, և չկա այնպիսի բառ, որն արտահայտի այդ հասկացությունը: Ուստի, *ճշմարիտին* հակադրվող բնորոշումները որպես *ճշմարիտի* հակոտնյայի կերպավորումներ մեկնաբանելը կարելի է համարել հիմնավորված:

Վերադառնալով սույն քննարկման բուն թեմային՝ նշենք, որ բժշկագիտության շրջանակներում նույնպես քննարկվում են այն բոլոր իմացաբանական, մեթոդաբանական ու էպիստեմոլոգիական հիմնախնդիրները, որոնք առկա են բոլոր գիտություններում, և բնական է, որ բժշկագի-

⁹ Խոսքային այս երևույթի բացատրությունը և այլ պարզաբանումներ, տե՛ս Ա. **Հայրապետյան**, Փոխանունություն և խոսքիմասային փոխանցում // «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (86), Եր., 1995, էջ 161-164:

տությունը նույնպես ենթարկվում է սկեպտիկական հարձակումների¹⁰:

Գիտությունն ու գիտական գիտելիքը միանշանակորեն ճշմարիտ համարելու մտայնությունը գալիս է հազարամյակների խորքից, սակայն ներկայումս իշխող դիրք է գրավում գիտական գիտելիքի հավանականային (փրոբաբիլիզմ) և սխալական (ֆալսիբիլիզմ) փոփոխյան հարացույցը¹¹: Եվ նեգատիվիստական այս հարացույցի շրջանակներում է, որ Թ. Կունը (թեև մի շարք հարցերում հակադրվում է Կ. Փոփերին) մատնացույց արեց գիտական գործընթացների արտագիտական, հակագիտական և իռացիոնալ բնույթը¹²: Իսկ գիտության վրա ազդեցություն թողած արտագիտական երևույթներին վերաբերող էպիստեմոլոգիական քննադատությունն իր լրմանը հասցրեց Պ. Ֆայերբախը, որը գիտության արժեքանական կարգավիճակը հավասարեցրեց դիցաբանությանը, մարմնավաճառությանը, ձեռներցությանը և մարդկային գործունեության այլ (ընդունելի կամ անընդունելի) ձևերի¹³:

Գիտությանը վերաբերող այս քննարկումներից (սիլլոգիզմի օրենքով) պարզ է դառնում, որ պնդելը, թե բժշկագիտական գիտելիքը կարող է լինել հավաստի և ճշմարիտ ռացիոնալ ու արդարացված չէ: Բժշկագիտական գիտելիքը, ինչպես գիտական բոլոր տեսակի գիտելիքները, ընդամենը հավանական է, որի համար էական են ոչ միայն ներգիտական չափանիշները, այլև պատմական ժամանակաշրջանը, նպատակը, գործառույթները և այլն¹⁴:

Բայց բժշկագիտությունը խոչընդոտող գործոնների քանակն այս քանով չի ավարտվում: Այն, լինելով ինտեգրատիվ գիտություն, օգտվում է այլ գիտակարգերի պատրաստի արդյունքներից՝ վերջիններս համադրելով միմյանց և իրենում կատարված բացահայտումներին: Ուստի լիովին հնարավոր է, որ ինչ-որ գիտակարգի տրամադրած (հավանական) ճշմարիտ մտակառույց բժշկագիտության շրջանակներում համադրվի մեկ այլ գիտակարգի տրամադրած կեղծ արդյունքին և խաթարի բժշկագիտական ճանաչողության գործընթացը: Հատկանշական է նաև այն, որ բժշկագիտությունը իրենում ինտեգրված գիտակարգերի հետ հարաբերվում է զգալիորեն կախյալ ու կրավորական դիրքերից. մի իրադրություն, որը հատուկ չէ ինտեգրատիվ բոլոր գիտակարգերին: Ֆիզիկայում, քիմիայում, կենսաբանության մեջ (իրենց տարատեսակներով) և բնական այլ գիտություններում ընդունելի մտայնությունները

¹⁰ St' u, օրինակ, **Marcum J. A.**, Humanizing Modern Medicine: An Introductory Philosophy of Medicine, Houston, 2008, էջ 97-119:

¹¹ St' u **Popper R. K.**, Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge, New York, 1962, էջ 228-229:

¹² St' u **Кун Т.** Структура научных революций, М., 1977, էջ 237-244:

¹³ St' u **Фейерабенд П.** Против метода: Очерк анархистской теории познания, М., 2007, էջ 24-26:

¹⁴ St' u **Геворкян Г.** К вопросу о признании в нуке утверждений и теорий // Философия: Наука: Культура, Ер., էջ 79-88:

պարզապես հարացուցային դեր են խաղում բժշկագիտության համար¹⁵:

Գիտական գիտելիքի տեսանկյունից շատ կարևոր է նաև արդի բժշկագիտության խոսույթում դասագրքային արձանագրությունն ստացած անհատական դեպքերի (individual cases) խնդիրը, ըստ որի՝ չի բացառվում, որ անհայտ թվով երևույթներ պարզապես չենթարկվեն ոչ մի օրինաչափության: Իսկ օրինաչափության հունից դուրս գտնվող դեպքերը չեն կարող գտնվել ոչ բժշկագիտության, ոչ էլ մեկ այլ բնագիտական հետազոտության տիրույթում:

Այս համատեքստում հատկանշական է, որ հնուց եկող բանավեճն առ այն՝ բժշկագիտությունը գիտություն է, թե՛ արվեստ, վաղուց դուրս է մղվել գիտափոխարկման խոսույթից, բայց ոչ այն պատճառով, որ գտնվել է բժշկագիտության ինքնանույնականացումը: Այս բանավեճն ընդհատվել է բժշկագիտության բարձր հեղինակության շնորհիվ, որին վերջինս հասել է արտաքին՝ սոցիալ-քաղաքական գործոնների ազդեցությամբ: Իսկ ներկայումս գերիշխող տեսակետի համաձայն՝ բժշկագիտությունը, լինելով խիստ գործնական ոլորտ, հետամուտ է ոչ թե իմացությանն ու ճշմարտությանը, այլ դեպքերի ընթացքը դեպի ցանկալի արդյունքն ուղղորդելուն¹⁶: Ուստի, եթե բժշկագիտության ինքնանույնականացման հարցը կրկին արձարծվի, ապա անհիմն չի լինի առաջարկվող տարբերակներին հավելել ևս մեկը, այն է՝ գուցե բժշկությունը պարզապես արհեստ և/կամ տեխնիկա՞ է, իսկ բժշկագիտությունը՝ տեխնոլոգիա՞:

Այսքանով հանդերձ, ամեն կասկածից վեր է, որ բժշկագիտությունը հասել է ահռելի բարձունքների և արձանագրել հսկայական արդյունավետություն: Բայց իմացության հարցում, ինչպես բոլոր գիտությունների, այնպես էլ բժշկագիտության տրամադրության տակ եղած գիտելիքները կարող են լինել հավանական ու ոչ երբեք հավաստի: Իսկ հավաստիության նույնիսկ ամենաբարձր աստիճանի մտակառույցը դեռևս ճշմարիտ չէ, որովհետև, ինչպես Գ. Ֆրեգեն է իրավացիորեն պնդում, «... կես ճշմարիտը ճշմարիտ չէ: Ճշմարտությունը չի հանդուրժում «շատ» ու «քիչ»¹⁷:

Հաշվի առնելով գիտական և մասնավորապես բժշկագիտական գիտելիքի այս յուրահատկությունները՝ կարելի է վստահորեն ասել, որ **կորոնավիրուսային համավարակին վերաբերող հայտարարությունները, որոնք մեկնարկում են բժշկագիտությունից և ներկայանում իբրև միանշանակ ճշմարտություններ, ճշմարիտ լինել չեն կարող**: Ուստի հարց է առաջանում, թե ճշմարիտի հակոտնյայի որ կերպավորումն է այդ հայտարարությունների իմացաբանական բնորոշիչը, քանի որ դա *ճշմարիտը* չէ:

¹⁵ Stú Ninham B. W. and Boström M., Building bridges between the physical and biological sciences // Cellular and Molecular Biology, 2005, էջ 805, <https://bit.ly/36UMBmc> (մուտք՝ 09.02.21.)

¹⁶ Stú Henk A.M.J. Ten Have and Stuart F. Spicker, Introduction // The Growth of Medical Knowledge: Knowledge and Practice in European Medicine: The Case of Infectious Diseases, Philosophy and Medicine., Vol. 36, Dordrecht / Boston / London, 1990, էջ 3-10:

¹⁷ Фреге Г. Мысль: Логическое исследование // Логика и логическая семантика: Сборник трудов, М., 2000, с. 327.

Միանշանակորեն կատարվող պնդումների զգալի մասը իրականությանն ուղղակի չի համապատասխանում, ու թեև չենք կարող վստահ լինել, որ իրականությանը համապատասխանող պնդումները ճշմարիտ են, սակայն կարող ենք ասել, որ չհամապատասխանող պնդումները միշտ կեղծ են¹⁸: Հետևաբար՝ համավարակին վերաբերող ներկայիս խոսույթում առկա մտակառույցների ահռելի մասի համապատասխան բնորոշիչը *կեղծն է*: Դրանք ելակետվում են չհիմնավորված տվյալներից, ոչ ճշգրիտ դիտումներից և իմացաբանական այլ խախտումներ պարունակող գործընթացներից, որոնք ուղեկցվում են նաև տրամաբանական (հապճեպ ընդհանրացում, հակասող դեպքերի անտեսում, համանմանության բացարձակացում) սխալներով: Հասկանալի է, որ իմացաբանական խախտումներ պարունակող նախադրյալներից (պատահականությունները չհաշված) ճշմարիտ եզրակացություններ բխել չեն կարող, բայց մոլորությունն է՝ ավելի է մեծանում, երբ առկա նախադրյալները համակցվում են տրամաբանական սխալներով: Համավարակին վերաբերող խոսույթի այս բազմաշերտ մոլորությունը, ի թիվս այլնի, ակնհայտ դարձավ բժշկական դիմակ կրել/չկրելուն վերաբերող փոխբացառող բազմաթիվ պնդումների առնչությամբ. բազմաթիվ գիտնականներ ու պաշտոնյաներ պնդում էին, թե դիմակը ոչ մի կերպ չի կարող ազդել համավարակի տարածման ընթացքի վրա, ուրիշներն էլ պնդում էին ճիշտ հակառակը, սակայն, ինչպես պարզվեց հետո, վարակի տարածման հարցում դիմակ կրել/չկրելն ունի միայն հավանականային բնույթ:

Կորոնավիրուսային համավարակին վերաբերող ներկայիս խոսույթի մեկ այլ խոշոր մասն էլ կարելի է որակել *նարատիվ* բնորոշմամբ, որովհետև ներկայումս մի շարք գիտնականներ ու պաշտոնյաներ արտահայտում են համավարակին վերաբերող գաղափարներ՝ չունենալով ոչ մի «...գործառություն, բացի սիմվոլիկ գործունեությունից որպես այդպիսին ...»¹⁹: Եվ չնայած այս հանգամանքին՝ այդ գաղափարները մարդկային կեցության մեջ ունեն հիմնարար տեղ ու դեր²⁰: Իսկ միտքն իրավացիորեն կարող է որակվել նարատիվ, եթե ունի հենց այսպիսի հատկանիշներ:

Համավարակային ներկայիս խոսույթի և՛ պաշտոնական, և՛ դրան հակադրվող պնդումների զգալի մասն էլ քաղաքական միջեր են, որովհետև բազմաթիվ բժիշկներ ու քաղաքական գործիչներ (կամա թե ակամա) դեպքերին ու երևույթներին անդրադառնում են ընտրողաբար և, խոսույթը դրամատիկացնելով, ուղղորդում լսարանի քաղաքական կենսակերպն ու գործողությունները, դիրքորոշումներն ու ինքնանույնականացումը²¹: Այսինքն խոսք հաղորդող սուբյեկտները մտքերին

¹⁸ St u **Popper R. K.**, *Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge*, New York, 1962, էջ 226:

¹⁹ **Барт Р.** Смерть автора // *Избранные работы: Семиотика: Поэтика*, М., 1989, с. 384.

²⁰ St u **Лютар Ж.-Ф.** *Состояние постмодерна*, М., 1998, էջ 72-78:

²¹ Քաղաքական միջի էության մասին համակողմանիորեն տե՛ս u **Tudor H.**, *Political myth*, London, 1972, էջ 137-140:

տալիս են այն բոլոր հատկանիշները, որոնք անհրաժեշտ ու բավարար են մտակառույցները քաղաքական միջ դարձնելու համար:

Համավարակային ներկայիս խոսույթի պարունակության մասերին վերաբերող որակումների այս հատվածական (ֆրագմենտալ) շարքը հավանաբար կարելի է երկար (կամ անվերջ) շարունակել: Բայց վերը տրված մի քանի որակումները լիովին բավարար են՝ ցուցադրելու համար ճշմարիտի հակոտնյայի որոշակի կերպավորումներ, որոնք գոյանում են, երբ խոսք հաղորդող սուբյեկտը անում է միանշանակ պնդումներ: Իսկ ինչ վերաբերում է այդ խոսույթի ընդհանրական (ոչ հատվածական) ու հաստատող (ոչ հերքող) որակմանը, որի ճիշտ հակառակն իրականացվեց սույն վերլուծության մեջ, ապա դա պարզապես հնարավոր չէ ոչ այստեղ և ոչ էլ այլուր: Այս անհնարինության պատճառն այն է, որ ընդհանրական որակման կարող են ենթարկվել միայն այն մտակառույցների համախմբությունները, որոնցում ներառված են իմացաբանական միևնույն բնորոշիչով որակվող գաղափարներ: Իսկ ճշմարիտ բնորոշման դեպքում ի հայտ է գալիս նաև մտքերի միմյանց շաղկապման տրամաբանական կանոնավորության պահանջը: Որպես կանոն, նույնիսկ մեկ ոչ ճշմարիտ բաղադրատարրի առկայությունը լիովին բավարար է, որպեսզի մտային ամբողջական կառույցը վերածվի ճշմարիտի հակոտնյայի, որովհետև ցանկացած մտակառույց կա՛մ ամբողջովին ճշմարիտ է (եթե դրա բոլոր տարրերը ճշմարիտ են), կա՛մ էլ ճշմարիտ չէ կրկին ամբողջովին (եթե ճշմարիտ չէ դրա գոնե մեկ տարրը)²²: Հետևաբար, համավարակին վերաբերող ներկայիս խոսույթն ընդհանրական ու հաստատող որակման ենթարկել հնարավոր չէ, որովհետև, ինչպես պարզվեց, դրանում առկա են իմացաբանական տարրեր բնորոշումների համապատասխանող մտակառույցներ՝ չհաշված տրամաբանական կանոնավորության հարցը:

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համավարակին վերաբերող ներկայիս խոսույթում առկա այն բոլոր մտակառույցները, որոնք ներկայացվում են որպես գիտական գիտելիք և/կամ գիտությամբ հիմնավորված ու հավակնում *ճշմարիտ* բնորոշմանը, սկզբունքորեն չեն կարող լինել այդպիսին: Համավարակային ներկայիս խոսույթում շրջանառվող իսկական (այլ ոչ այդպիսին ներկայացվող) գիտական բոլոր գիտելիքները ու դրանցից բխող բոլոր պնդումները լավագույն դեպքում կարող են լինել հավանական և ոչ երբեք ճշմարիտ: Իսկ բոլոր այն գիտելիքները, որոնք ներկայացվում են որպես ճշմարիտ, ինքնըստինքյան վերածվում են ճշմարիտի հակոտնյա մտակառույցների, եթե նույնիսկ մինչև այդպես ներկայացվելը հավանական էին:

Ի հավելումն նշենք, որ ճշմարիտի հակոտնյաներից հավանաբար

²² Այս պնդումն այստեղ արվում է, ի թիվս այլնի, մաթեմատիկական ճշմարտության բնույթի համանմանությամբ, տե՛ս **Ս. Հ. Ավետիսյան**, Բնագիտության փիլիսոփայական հարցեր // Աշխարհի գիտական պատկերը և փիլիսոփայությունը, Եր., 1984, էջ 35-37:

միայն բողոքարյան սիմուլյակրն է, որով կարելի է ընդհանրականորեն որակել ամբողջական խոսույթներ: Այս հատկությունը, սակայն, չի կարելի տարածել (ներկայումս բացահայտված) ճշմարիտի մեկ այլ հակոտնյալի վրա ևս: Մրա պատճառն այն է, որ սիմուլյակրը ճշմարիտի հակոտնյա այլ կերպավորումներից տարբերվում է նաև այն բանով, որ այն (բացի մտքի հատկանիշ լինելուց) նաև մի երևույթ է, որն իր գոյության վրա կլանում ու ոչնչացնում է այն ամենը, ինչով «... տարբերվում է «ճշմարիտը» «կեղծից», «իրականը» «երևակայականից»»²³:

Բանալի բաներ – կորոնավիրուս, համավարակ, բժշկագիտական գիտելիք, ճշմարիտի հակոտնյա, կերպավորում, միֆ, նարատիվ

ГЕВОРГ АКОПЯН – О гносеологической квалификации нынешнего дискурса коронавирусной пандемии. – В статье нынешнему дискурсу коронавирусной пандемии дана гносеологическая квалификация. Анализ в основном сосредоточен на оценке с соответствующими характеристиками тех ментальных структур, которые представляются как однозначные истинные. С опорой на исследования по философии науки и медицины аргументируется, что все утверждения нынешнего дискурса коронавирусной пандемии, которые претендуют на научность и истинность, превращаются в антиподы истинного.

Ключевые слова: *коронавирус, пандемия, медицинское знание, антипод истинного, изобразиться, миф, нарратив*

GEVORG HAKOBYAN – On the Gnoseological Qualifications of the Present Discourse of the Coronavirus Pandemic. – In the article is attempted to expose the present discourse of the coronavirus pandemic to gnoseological qualification. The analysis mostly focuses on the problem of evaluating with the corresponding characterizations of the mental structures that are presented as univocal true. Emanating from researches of the philosophy of science and medicine, it is argued that all statements of the present discourse of the coronavirus pandemic, which simultaneously claim to be scientific and true, turn into antipodes of the true.

Key words: *coronavirus, pandemic, medical knowledge, antipode of true, figuration, myth, narrative*

²³ **Бодрийяр Ж.** Симулякры и симуляция, Тула, 2013, с. 17-19.